

**ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՄԵՐԻ ՋԵՌԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ***

Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեր քննությունը չէր լինի ամբողջական, եթե չանդրադառնայինք Մովսես Կաղանկատվացու մի հաղորդմանը, որտեղ նա, իրար խառնելով Հերակլեյսեր առաջին և երկրորդ արշավանքները⁷⁰, այնուամենայնիվ կանգ է առնում հիմնականում առաջին արշավանքի դեպքերի նկարագրության վրա և նշում, որ Հերակլ կայսրը «...ասպատակ սփռեալ զկողմամբ Ատրպատականու մինչև ցտեղի անուանեալն Գայշ աւան՝ տեղի ամարոցաց ամսոց ջերմութեան ընտրեալ յառողջութիւն հովասնութեան թագաւորացն Պարսից, որ է ի սահմանս Մարաց աշխարհին: Աւերէր, քանդէր, գերէր զերկիրն ամենայն և անտի դարձեալ՝ կամէր ձմերելի կողմանս Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհացա՞ն՝: Մովսես Կաղանկատվացու աշխատության ձեռագրերում «Գայշ աւանը» ունի նաև «Գաշաւան» և «Գայշանխոյ» տարբերակները, որոնցից վերջինը հանդիպում է լոկ մեկ ձեռագրում: Դատելով հեղինակի այն տեղեկությունից, որ Հերակլը արշավում է մինչև Գայշավան, որը Մարաց սահմաններում էր, բայց Ատրպատականի կողմերում, մենք կարծում ենք, որ այն կարող է և նույնանում է Հրատն Մեծի հետ: Տեղանունը մեզ հասել է աղավաղված գրությունամբ, որի մեջ, ուշադիր քննության դեպքում, դժվար չէ տեսնել «Գուշասպան» անունը: Հետագա արտագրությունների ժամանակ «ու>ա», «ս>ւ» և «պ>ա» շփոթի հետևանքով «Գուշասպան»-ը վերածվել է «Գաշաւան»-ի: Ըստ որում նախնական գրությունը ավելի մոտ է ոչ թե Գայշավանը, այլ Գաշավանը, չնայած նրանցից առաջինն է տեղ գտել քննական բնագրում: Բայց չէ որ «Գուշասպան»-ը ոչ այլ ինչ է, եթե ոչ Սեբեոսի «Վշասպան—Վընասպան—Վշնասպան—Վշնասպան»-ի և Թովմա Արծրունու «Վշնասպան»-ի պարսկական արտասանությունը: Ք. Պատկանյանը Սեբեոսի երկի հայերեն հրատարակության մեջ «Վնասպան»-ը ուղղել է Վշնասպ, նշելով. «Մեք եղաք Վշնասպ, ուղղագրոյն համարեալ զայս ձեւ ըստ հնչման հայոց. տե՛ս յեր 29 Վարդան Վշնասպ. նույնպէս առ Ղազ. Փարպ., եր. 359, 390, 487, 489, 529 և այլն, նոր տպ. զանուանս՝ Ատր Վշնասպ, նիխոր Վշնասպդատ, Միհր Վըշնասպ, Յղատ Վշնասպ և այլն: Իսկ ըստ պարսից հնչման անուն հրատիս էր (...) Գուշասպ, թերևս Վշասպ, այլ ոչ Վնասպ կամ Վշնասպ»⁷², Հ. Հյուբշմանը նույնպես գրել է, որ Վշնասպի պարսկերեն ճշգրիտ ձևը, անկասկած «Գուշասպ» է⁷³: Այս ամենի լույսով պարզ է դառնում, որ հայ պատմիչներից միայն Մովսես Կաղանկատվացին է, որ պահպանել է Վշնասպի կոչվող Հրատն Մեծի պարսկական արտասանությունը: Վերջինս հայկական միջավայրում կարող էր մատուցվել որպես «Վշասպ», «Վշնասպ» և «Վշնասպան»: Ուշագրություն է գրվում մեկ հանգամանք ևս: Գայշավան-Գուշասպար պար-

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1988, № 3.

70 Я. Манандян. Маршруты персидских походов императора Ираклия, с. 378.

71 Մովսէս Կաղանկատվացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարդ Առաքելյանի. Երևան, 1983, էջ 131—132:

72 Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն և սկիզբն նորագիտ պատմութեան Միսթարայ Անեցոյ, ի լոյս ած Բ[երովրէ] Պ[ատկանեան]. Ս. Պետերբուրգ, 1879, էջ 92: Տե՛ս նաև էջ 197:

⁷³ H. Hübschmann. Armenische Grammatik. Leipzig, 1. Teil, 1895, S.7, Anm. 1.

ից թագավորների ամառանոց էր և ոչ թե ձմեռանոց, ինչը լիովին համապատասխանում է նրա բնակլիմայական պայմաններին: Հետևաբար Վերա-Փրասպա-Գուշասպը եղել է ամառանոց և սխալվում է Ստրաբոնը, երբ Գանձակը համարում է ամառանոց, իսկ Վերան՝ ձմեռանոց⁷⁴:

Այլևս չսորանալով Ատրպատականի թագավորների ձմեռային աթոռանիստին վերաբերող հարցերի մեջ, կրկին վերադառնանք Գանձակի տեղագրության խնդրին: Կարծում ենք, ինչպես ցույց է տվել Վ. Մինորսկին, տեղագրությունը ճշտելու բավարար տեղեկություններ պահպանել են Թեոփիլակտես Սիմոկատտան և արաբական աշխարհագետները: Բյուզանդական չեղինակը, Մավրիկիոս կայսեր արշավանքների առնչությամբ գրում է, որ հռոմեացիների բանակը, անցնելով Ուրմիո լճի արևմտյան ափերով, դուրս է գալիս մոտակա դաշտավայրը, որտեղ գտնվում էր Գանձակ փոքր քաղաքը և հետապնդելով Բահրամ Չուբինի պարսկական բանակը, մոտենում է Balath (ποταμός τοῦ Βαλαράθ) կամ Blarath գետին: Այստեղ ճակատամարտ են տալիս Բահրամ Չուբինին և նրան հաղթելուց հետո կանգ առնում Գանձակի մատույցներում⁷⁵: Նույն դեպքերի կապակցությամբ Սեբեոսը գրում է, որ նրանց հանդիպումը և ճակատամարտը կայացավ Ատրպատականի Վարարատ գավառում. «Արդ՝ առեալ ապստամբին միհրացելոյն ղզարս իւր, զփիդս և զամենայն զգանձս թագաւորական շու արարեալ զնայ հասանէ յԱտրպատական. և բնակեցան սակաւ մի հեռագոյն ի միմեանց ի Վարարատ գաւառին»⁷⁶: Նույն առիթով Թովմա Արծրունին գրում է. «...եւ զՄուշեղ այր քաջամարտիկ եւ հզօր զօրութեամբ, եւ զամենայն զօրս յունաց եւ հայոց, վրաց եւ աղուանից, գունդ անթիւ բազմութեամբ եկեալ ի կողմանս Ատրպատականի ի Վառարատ գաւառին»⁷⁷: Վ. Մինորսկին, զուգադրելով Բալարաթ կամ Վալարաթ անունը Վարարատին, գտնել է, որ այդ անունները նույնանում են: Միանգամայն իրավացիորեն նա եզրակացնում է, որ Վարարատը կամ Վալարաթը ներկայիս Զաղաթու գետն է⁷⁸: Իսկ նրա ստորին հոսանքի շրջանն էլ բնականաբար պետք է կոչվեր Վարարատ⁷⁹:

Գանձակի տեղագրության համար արժեքավոր են Կուդամայի, Խորդադրեհի և Մուքդասիի տվյալները, որոնց համաձայն Մարաղայից մինչև Զանգա 6 փարսախ էր կամ մեկ անցում, Զանգայից Մուսաարադ՝ 5 փարսախ կամ մեկ անցում և Մուսաարադից Բարզա 4 փարսախ կամ մեկ անցում⁸⁰: Վ. Մինորսկին, քննության առնելով հիշյալ երթուղին, ցույց է տալիս, որ Բարզան գտնվել է Բուկան-Սարայի մարզում և համապատասխանում է Սակկըդին. ըստ այդմ էլ Մարաղայից 6 փարսախ հեռավորության վրա գտնվող Զանգան էլ համապատասխանում է Լեյլանի մոտակայքի հինավուրց քաղաքի մնացորդներին⁸¹: Զաղաթու գետի վտակներից մեկը կոչվել է Զանգա-ռուդ⁸², որը մեկ անգամ ևս վկայում է Գանձակի՝ գետի ափին գտնվելու մասին, ուստի Լեյլանի կողքով հոսող Զաղաթու-Վարարատի աջ վտակը մինչև արաբական տիրապետության հաստատումը պետք է կոչվեր

⁷⁴ Վ. Մինորսկին գտնում է, որ Գանձակը եղել է ձմեռանոց, իսկ Վերան՝ ամառանոց (հնչվ. աշխ., էջ 103): Այս հանգամանքն էլ թյուրիմացության մեջ է դրել Ռոուլինսոնին, որը գտնում էր, որ ամառային աթոռանիստ Գանձակը Լեյլանի պես տաք վայրում լինել չէր կարող (նշվ. աշխ., էջ 39, 119):

⁷⁵ Феопилакт Симокатта. История. М., 1957. с. 129. 131.

⁷⁶ Սեբեոս, էջ 77:

⁷⁷ Թովմա Արծրունի, էջ 94:

⁷⁸ V. Minorsky. Op. cit. p. 89 - 91.

⁷⁹ Ոչնչով հիմնավորված չէ Ս. Նրեմյանի կողմից Աշիլայ գետի նույնացումը Վարարատին. որը տեղ է գտնել նրա բազմաթիվ քաղաքներում:

⁸⁰ V. Minorsky. Op. cit. p. 95.

⁸¹ Նույն տեղում, էջ 96—97:

⁸² Նույն տեղում, էջ 97:

Գանձակ-ոռտ: Ասվածից բխում է, որ հայ-պարսկական սահմանագիծը, սկսվելով Թավրիզի արևմտակողմում, գնում էր մինչև Սոհունդ լեռը և այնտեղից Գանձակ-ոռտ գետով հասնում մինչև Վարաթատ-Ջաղաթու: Հատե-լով վերջինս սահմանը անցնում էր այնուհետև, ամենայն հավանականու-թյամբ. Մահաբադ քաղաքի հյուսիսակողմով և հասնում մինչև Կոտուր-Ջագրոշի լեռնաշղթա, ընդգրկելով նաև Փոքր Զաբի վերին հոսանքի շրջանը: Նման սահմանագիծը, ըստ մեզ, իր հաստատումն է գտնում Պտղոմեոսի հա-ղորդումներում: Համաձայն հույն աշխարհագետի, Մեծ Հայքի արևելյան և հարավ-արևելյան սահմանները որոշվում էին մի քանի կետերով, որոնց կոորդինատները նա պահպանել է: Սահմանն սկսվում էր Կուր գետի գետա-բերանից ($79^{\circ}40'$ և $44^{\circ}30'$), անցնում էր Կասպից ծովի ափագծով, Երասխի գետաբերանով ($79^{\circ}45'$ և $43^{\circ}50'$) և հասնում մինչև $79^{\circ}45'$ և $43^{\circ}20'$ կոոր-դինատներ ունեցող վայրը, այնտեղից շարունակվում մինչև Կասպիոն լեռը, որի եզրագծից կոորդինատներն էին 79° և $42^{\circ}31'$ ու $80^{\circ}30'$ և 40° : Մինչև նշված վերջին կետը Մեծ Հայքը սահմանակցում էր Մարաստանին կամ Ատրպատականին, որտեղից սահմանը կտրուկ թեքվում էր դեպի հարավ-արևմուտք և հասնում Տիգրիս գետին $75^{\circ}30'$ և $38^{\circ}30'$ կոորդինատներն ու-նեցող վայրում⁸³: Հարկ է նշել, որ այս մանրամասն և հավաստի նկարա-գրությունն ունի մեկ թյուրիմացություն: Պտղոմեոսը, մեզ անհայտ պատ-ճառներով, Կասպից լեռը հիշատակում է ոչ թե $79^{\circ}45'$ և $43^{\circ}20'$ ու 79° և $42^{\circ}31'$ վայրերի միջև ընկած հատվածում, այլ 79° և $42^{\circ}31'$ ու $83^{\circ}30'$ և 40° կոորդինատներն ունեցող վայրերի միջև: 79° և $42^{\circ}31'$ կոորդինատներն ու-նեցող վայրից մի փոքր հյուսիս-արևմուտք աշխարհագետը տեղադրում է Naxuana—Նախճավանը ($78^{\circ}50'$ և $42^{\circ}45'$), հանգամանք, որ մեր կարծիքով վկայում է այն մասին, որ նրանցից առաջինը գտնվել է անմիջապես Թավ-րիզի մոտակայքում, իսկ Հայոց թագավորության սահմանի հարավ-արևել-յան ծայրակետը ($80^{\circ}30'$ և 40°)՝ Գանձակ Շահաստանի հարևանությամբ: Եվ իրոք, ինչպես Պտղոմեոսի մոտ, այնպես էլ համաձայն կատարված քննու-թյան Գանձակ Շահաստանից սահմանը կտրուկ թեքվել է դեպի հարավ-ա-րևմուտք: Ասվածից բխում է, որ Պտղոմեոսի Մեծ Հայքի նկարագրության մեջ հանդիպող Արսեսա լիճը ոչ թե վանա լիճն է և հիշատակվում է Թոսպի-տիսին զուգահեռ, այլ Ուրմիո կամ Կապուտան լիճը, որի արևելյան ափին հույն աշխարհագետը տեղադրում է Caputa բնակավայրը⁸⁴: Լճից հյուսիս տեղադրված է Zurza-ն, որը Ս. Երեմյանը իրավացիորեն նույնացնում է Մործորին: Պտղոմեոսի տեղեկությունները ոչ միայն ապացուցում են Ար-սեսայի և Կապուտանի նույնությունը, այլև ցույց են տալիս, որ Ատրպա-տականի ձեռական իշխանության երկիրը II դարում սոսկ ձևականորեն պետք է համարվեր Պարթևական թագավորության մաս և փաստորեն վա-ղուց անկապտելի մասն էր կազմում Մեծ Հայքի Արշակունյաց թագավորու-թյան: Անշուշտ, կարելի է առարկել, թե Մեծ Հայքի նկարագրությունը չի համընկնում Մարաստանի նկարագրությանը, որը և կարող է կասկածի տակ առնել նրա ճշմարտացիությունը: Այսպես, Գանձակ Շահաստանը, որ Պրտ-դոմեոսի երկում հանդիպում է Zaxaxx սխալ գրությամբ, ունի $83^{\circ}40'$ և $39^{\circ}30'$ կոորդինատները, հետևաբար բնավ էլ հայ-մարական սահմանագրու-թյան չի տեղադրվում⁸⁵: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Մարաստանի նկարագրությունը չի վերաբերում Պտղոմեոսի ապրած ժամանակաշրջանին և գալիս է այն շրջանից, երբ դեռ գոյություն ունեւր Ատրպատականի մարա-

⁸³ Claudii Ptolemaei Geographia, e coddicibus recognovit, prolegomenis, annota-
tione indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, voluminis primi, pars secunda, Pa-
risius, 1901, V, 11, 1, v, 12.

⁸⁴ Նույն տեղում, հ. 12, 10:

⁸⁵ Claudii Ptolemaei Geographia, edidit Carolus Fridericus Augustus Noebbe, tom.
II, Lipsiae, 1845, VI, 2, 10.

կան թագավորությունը: Համաձայն նկարագրության Կասպե-Փայտակարանը գտնվել է Մարաստանում, սակայն Մեծ Հայքի հատվածում հիշյալ երկրամասը, առանց անունը հիշատակվելու, մտնում է Հայոց թագավորության մեջ: Ուսումնասիրողները վաղուց արդեն ցույց են տվել, որ պտղոմեոսյան կոորդինատները կազմվել են զանազան ուղեցույցների տվյալների հիման վրա և ըստ մեծի մասին խիստ պայմանական են, իսկ շատ դեպքերում էլ պարզապես սխալ: Ունենալով իր տրամադրության տակ տարբեր դարաշրջանների նյութեր, Պտղոմեոսը փորձել է իրար հարմարեցնել դրանք, ուստի Մարաստանի նկարագրության մեջ հայ-պարսկական սահմանից բավական հեռու գտնվող Գանձակը II դարի քաղաքական կացությանը համապատասխան, երբ հայ-պարսկական սահմանը նշանակալից չափով տեղադրվել էր արևելք, ցույց է տվել իր իսկական դիրքից անհամեմատ արևելք:

Գանձակը Սասանյան Պարսկաստանի խոշոր քաղաքներից էր: Ինչպես վկայում է «Ջատկական ժամանակագրություն»-ը, Հերակլ կայսրը, որ 27-օր մնացել էր զբաղված Գանձակում, Կոստանդնուպոլիս ուղարկված նամակում հայտնում էր, որ քաղաքում շուրջ 3000 տուն կա⁸⁶, Վարարատ գետի աջափնյա վտակ Գանձակ-ոտի ափերին կառուցված քաղաքը, որ հիմնականում տարածվում էր գետի ձախ ափին, մի փոքր մասով էլ գտնվել է դեպի հայկական՝ աջ ափին, որը և իրավունք է տվել Փավստոս Բուզանդին Գանձակը համարելու հայոց սահմանապահների զորակայան: Նման սահմանագիծը խիստ խորհրդանշական էր: Պարթև և հայ Արշակունիները կրոնական արարողությունների համար գալիս էին Գանձակ Շահաստան, որը նրանց միաժամանակ միավորում էր և բաժանում սահմանային Գանձակ-ոտ գետով:

Մենք պարզեցինք հայոց թագավորների Ատրպատականի ձեռնարկի իշխանության հարավային և արևելյան սահմանները, որոնք միաժամանակ նաև պետական սահմաններ էին: Ինչ վերաբերում է մյուս սահմաններին, որ բաժանում էին այն Մեծ Հայքի մյուս երկրամասերից, ապա հյուսիսում ձեռնարկի իշխանության երկիրը տարածվում էր մինչև Վասպուրական, արևմուտքում՝ մինչև Կապուտանի արևելյան և հարավային ափերը, հարավ-արևմուտքում՝ մինչև Կոտուր-Ջազրոշի լեռնաշղթա և Արասի սահմանային գետը:

Հայոց թագավորների ատրպատականյան տիրույթների հետ կապված որոշակի կարևորություն է ներկայացնում Մարաց ամուր աշխարհի տեղադրությունը խնդիրը, որով և ճշտվում են ու որոշակիանում նրանց հյուսիսային սահմանները: Հ. Մանանդյանը Մարաց ամուր աշխարհը տեղադրել է Ջուլամերկի և նրան հարակից լեռնային շրջաններում, գտնելով, որ դրա օգտին է խոսում Սերետի տեղեկությունը Մարաց ամուր աշխարհի մոտ Ջարասպ լեռան գտնվելու մասին⁸⁷: Նույն եզրակացությանն է հանգել նաև Ս. Կանայանցը, ըստ որի հօգուտ այդ տեսակետի է խոսում Թովմա Արծրունու երկում պահպանված ավանդությունը, որից պարզվում է, որ Մարերի և Մար Աթոհակի զարմի բնակության վայրը համարվել է Փոքր Աղրագ գավառը, այսինքն Ջուլամերկի շուրջը գտնվող երկիրը⁸⁸: Շարունակելով զարգացնել իր տեսակետը, Ս. Կանայանցը գտնում է, որ հայ հեղինակների Մարաց բուն գավառը և հոմեական հեղինակների հիշատակած Mardomed-ների կամ Medomard-ների երկիրը համապատասխանում է այժմյան Մերգեվերին, որը տեղորոշվում է Ուշնուից հյուսիս ընկած շրջանում⁸⁹: Ս. Երեմյանը հակված է կարծելու, որ հիշյալ աշխարհի տակ պետք է հասկանալ

⁸⁶ Chronicon "aschale, recensuit Ludovicus Dindorfius. Vol. I, Bonae, 1832 p. 732.

⁸⁷ Հ. Մանանդյան. Պատմական-աշխարհագրական մանր աշխատություններ. — Հ.

Մանանդյան. Երկեր. հ. Ե, էջ 320:

⁸⁸ Ս. Կանայանց. Անհայտ դավառներ Հին Հայաստանի. էջմիածին, 1914, էջ 105:

⁸⁹ Նույն տեղում, էջ 106—107:

Հայոց թագավորության մեջ մտնող Դասն, Նիխորական և Մահկերտ-տուն պավանները 7327 կմ² տարածքով⁹⁰։ Զ. Մանանդյանը հետազայում, սակայն, փոխել է իր կարծիքը և Մարաց ամուր աշխարհը տեղագրել ներկայիս Կարա-դաղում կամ Ղարադաղում⁹¹։

Դիմենք սկզբնաղբյուրներին։ Խոսելով քրիստոնեության տարածման մասին, Ագաթանգեղոսը գրում է. «Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն ի Սատաղացոց քաղաքէն մինչև առ աշխարհոյն և աւետարանութեանն ի Սատաղացոց քաղաքէն մինչև առ Մծրին քաղաք արքայութեանն Հայոց. և յԱմդացոց քաղաքէն մինչև առ Մծրին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Շիրական երկրան, և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքը-Տան իշխանին, մինչև յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»⁹²։ Փափստոս Բուզանդը, անդրադառնալով հայոց Արշակ II թագավորի դեմ ապստամբած երկրամասերին, գրում է. «Եւ սկսան սորսորել զնալ ի բանակէն Հայոց թագաւորին. թողին զիրեանց արքայն Արշակ։ Բայց նախ աւամ զնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին։ Նախ բղենաշխն Աղծնեաց, և Նոշիրական բղենաշխն, և Մահկերտանն, և Նիհորականն, և Դասսըն-տրէին, և ամենայն նախարարութիւն Աղծնեաց, և զօրն և տունն տոհմին Աղծնեաց կողմանն ապստամբեցին յարքայն Հայոց Արշակայ, ...ապստամբեցին ի Արշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արծախայ, և ամուր դաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց յոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից»։

Յետ այսորիկ ապստամբաց ի թագաւորէն Հայոց և ձեռին իշխանութեանն տանն Հայոց թագաւորին, որ զԱտրպատական աշխարհան, յետս եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կազբից...»⁹³։ Պապ թագավորի օրոք հիշյալ երկրամասերը, այդ թվում նաև Մարաց ամուր աշխարհը, որ Փափստոսը այս անգամ կոչում է պարզապէս Մարաց կողմեր, Մուշեղ Մամիկոնյանը կրկին միացրեց թագավորությանը. «Եւ զկողմանսն Մարաց, քանզի և նոքա ապստամբեցին յարքայէն Հայոց. հարկանէր զնոսա մեծապէս. և գերէր զբաղումսն ի նոցանէն, և մնացորդացն դնէր հարկս, և առնուր պանդանդս»⁹⁴։ Հետաքրքիր են Սեբեոսի վկայությունները. «Յայնմ ժամանակի թագաւորեցուց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծրին քաղաքի։ Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուաստան առ երկրան Տաճկաց և առ երկրան Ասորւոց, և զԿապուտկեայ առ Կիւղիկեաւ, մինչև ցեղր ծովուն մեծի Արևմտից. և ցհիւսիսոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արեւելից և անցանէ առ սահմանան առ ամուր աշխարհան Մարաց, և հասանէ ի լեառն Զարասպ, և անցանէ առ Նոր Շիրակ երկրան»⁹⁵։

Եթե՛կ զաւրն Պարսից փութանակի հասանէին ի Մրծուին։ Այդ լինի Նրակլի կայսեր, եթէ՛ եկն խոռեամ ի Մրծուին, առնու զգաւրս իւր և գերութիւն, և դառնայ առ ամուր աշխարհան Մարաց. գալ հասանէ ի Փայտակարան»⁹⁶։

Այս տեղեկություններին մենք ավելացնում ենք նաև վաճարած կամ Բահրամ Զուրինի հրովարտակը՝ ուղղված Մուշեղ Մամիկոնյանին և մյուս հայ նախարարներին, ընայած նրա մեջ Մարաց ամուր աշխարհը չի հիշատակ-

90 Ս. Տ. Երևմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 65։ Այս տեսակետը արտացոլվել է հեղինակի այլ աշխատանքներում և բարոններում։

91 Я. Манандян. Маршруты персидских походов императора Ираклия, с. 383.

92 Ագաթանգեղոս, էջ 439 (§ 842)։

93 Փափստոս Բուզանդ, IV, Ե։

94 Նույն տեղում, V, ԺԱ։

95 Սեբեոս, էջ 53—54։

96 Նույն տեղում, էջ 125։

լիում. «...ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն. զո՛ր և դուք կամիք՝ արասցիք ձեզ թագաւոր: Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև դիպակո՛ճ և ցղուռն Աղուանից. և յԱսորոց կողմանէ՝ զԱրուստան, զՄրծուին և զԵօր Շիրական մինչև ցաւմանս Տաճկաց, զի առ նախնեալսն իսկ ձեզ լեալ է. և ուղարեմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացոց: Եւ ես մի իշխեցից քան զՋարասպ անցանել յայնկոյս. և գանձն Արեաց թագաւորութեանս Բաւական համարեալ լիցի ինձ և ձեզ, և այնչափ ձեզ շատ լիցի՝ մինչև ձեր թագաւորութիւնդ հաստատեսցի»⁹⁷:

Համաձայն բերված տեղեկությունների, որոնք Հ. Մանանդյանի կարծիքով պարզ ու որոշ գաղափար չեն տալիս Մարաց ամուր աշխարհի տեղադրության մասին, կարելի է տեղորոշել հիշյալ երկրամասը: Սխալվում է Հ. Մանանդյանը, ենթադրելով, թե Ագաթանգեղոսի տեղեկության համաձայն Մարաց ամուր աշխարհը գտնվել է Տմորիքի և Կորդիքի արևելակողմում, որոնք Ագաթանգեղոսի օգտագործած աղբյուրի գրության ժամանակ քաղաքականապես համարվել են Կորդվաց աշխարհի մաս: Իսկ Ատրպատականի և Մարաց ամուր աշխարհի միջև նա հավանական է համարել տեղագրելու մահկերտան իշխանի երկիրը և անգամ հանգել այն մտքին, որ «Մահբու-Տան» իշխանը. ինչպես ենթադրել է Ս. Կանայանցը⁹⁸, եղել է Մարաց ամուր աշխարհի կամ նրա որոշ մասի տերը⁹⁹: Հենվելով նշված տեղեկությունների վրա, այդ կամ էլ նաև Ագաթանգեղոսի, մեր կարծիքով, կարելի է հանգել միակ ճիշտ եզրակացությանը՝ որ Մարաց ամուր աշխարհը նույնական է Լուրագղան: Այս տեսակետը, որ, ինչպես վերը տեսանք, առաջ էր քաշել Հ. Մանանդյանը, փորձենք հիմնավորել: Փավստոս Բուզանդի հաղորդմանը պարզ է դառնում, որ Մարաց ամուր աշխարհը Դասն, Նիսորական կամ Նի-հորսական և Մահկերտ գավառների համարժեքը չէ: Ավելին, առավել հաստատուն կուլան կա հիշյալ գավառները համարելու նոր Շիրականի բզեշխության մեջ մտնող տարածք: Տմորիքի և Կորդիքի առանձին հիշատակությունը Փավստոսի կողմից այլևս անհնարին է դարձնում Մարաց ամուր աշխարհի տեղադրությունը Զուլամերկի շրջանում, որովհետև Ագաթանգեղոսի երկում այն սահմանային երկիր է: Եթե զարգացնենք այս տրամաբանական հետևությունները, ապա կտեսնենք, որ Փավստոսը Մարաց ամուր աշխարհը տեղադրում է ոչ թե Զուլամերկի կողմերում, այլ Հայոց թագավորների ատրպատականյան ձեռնարկի իշխանության և Կասպից աշխարհի միջև, հետևաբար Սեբեոսի տեղեկությունը մեկնել այն իմաստով, թե Ջարասպ լեռը գտնվել է Մարաց աշխարհում, հիմնադրել է: Խնդիրն այն է, որ անգամ Սեբեոսի հաղորդումը, առանց Փավստոս Բուզանդի վկայության, նման եզրակացության իրավունք չի տալիս: Եթե խորանանք Սեբեոսի առաջին վերկայության մեջ, ապա կտեսնենք, որ Արշալ. Փոքրին հատկացված երկրի սահմանները թվարկված են աշխարհագրական հերթականությամբ՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ: Մի կողմ թողնելով բոլոր սահմանների քննությունը, որ խնդրի հետ չի առնչվում, նշենք, որ համաձայն Սեբեոսի սահմանը հյուսիսային կողմից անցել է Կովկասյան լեռներով, որոնք ձգվում էին արևելք, Մարաց ամուր աշխարհի սահմաններով, հասնելով Ջարասպ լեռը և նոր Շիրական երկրով: Սակայն, նկարագրությունը, մեր կարծիքով, ունի մի քանի մուկ հատվածներ: Նախ անորոշ է Կովկասյան լեռներից մինչև Մարաց ամուր աշխարհը ընկած սահմանագիծը, արտաքնապես այն տպավորություն է ստեղծվում, որ Ջարասպ լեռը Մարաց ամուր աշխարհի սահմանագլխին էր և լուսաբանության էադիք է զգում «անցանէ առ սահմանամն առ ամուր աշխարհամն Մարաց» արտահայտությունը: Հավանական է ենթադրել, որ Եսայից ծովի ափագծով անցնող սահմանագիծը պարզապես տեղ չի գտել նկարագրության մեջ: Նույն հայեցակետից մոտենալով կարելի է կարծել,

⁹⁷ Նույն տեղում, էջ 78:

⁹⁸ Ս. Կանայանց. Անհայտ գաւառներ Հին Հայաստանի, էջ 112—113:

⁹⁹ Հ. Մանանդյան. Պատմական-աշխարհագրական մանր աշխատություններ, էջ 320:

որ նկարագրությունից դուրս է մնացել Ուրմիո լճի վրայով անցնող սահմանահատվածը: Հետևաբար «հասան է ի լեառն Զարասպ» արտահայտությունից չպետք է եզրակացնել, թե Զարասպ լեռը գտնվել է Մարաց ամուր աշխարհում կամ նրա սահմանագլխին: Ինչ վերաբերում է «անցան է առ սահմանան առ ամուր աշխարհան Մարաց»-ին, ապա, մեր կարծիքով, գրիչները բաց են թողել «առ սահմանան»-ից հետո «աշխարհին Կասպից» անունը, այլ խոսքով սկզբնական վիճակով այն, ամենայն հավանականությամբ, ունեցել է ներքոբերյալ տեսքը՝ «առ սահմանան աշխարհին Կասպից, առ ամուր աշխարհան Մարաց»: Նման սրբագրությունը հավանական է և իրականությունը համապատասխանող, եթե ի նկատի ունենանք Ագաթանգեղոսի վերը բերված հաղորդումը: Սեբեոսի երկի բերված հատվածի սույն մեկնաբանությունը խոսում է հօգուտ Մարաց ամուր աշխարհի և Ղարադաղի նույնացման և իր հաստատումն է գտնում Սեբեոսի երկրորդ վերկայության մեջ: Հ. Մանանդյանը, քննության առնելով վերջինս, գտել է, որ Հերակլ կայսրը Գանձակից Աղվանից մարզպանություն է զնացել Գանձակ—Միանե—Արդաբիլ—Փայտակարան—Կաղանկատույք գծով¹⁰⁰: Անվանի պատմաբանի կարծիքով Հերակլի զորքերը անցնում են Մարաց ամուր աշխարհի և Փայտակարանի միջով և մտնում Աղվանից մարզպանություն¹⁰¹: Հավանաբար Հ. Մանանդյանին թյուրիմացության մեջ է զցել Սեբեոսի երկի բերված հատվածի ոչ ճիշտ թարգմանությունը. «Он (Հերակլը—Հ. Բ.) взял свое войско и пленных, вернулся обратно через крепкую страну мидийцев и пришел в Пайтакаран»¹⁰²: Իրականում, բնագրից պարզ երևում է, որ կայսեր զորքերն անցել են Մարաց ամուր աշխարհի մերձակայքով կամ հարևանությամբ ու մտել Փայտակարան: Հարցի նման մեկնաբանության դեպքում Հ. Մանանդյանի առաջարկած երթուղով բյուզանդական զորքերը Փայտակարան կմտնեին անմիջապես Ատրպատականից, իսկ այդ երթուղու հարևանությամբ Մարաց ամուր աշխարհի ամեն մի տեղադրություն անհնարին է դարձնում վերջինիս պատկանելությունը Հայոց թագավորությանը: Հետևաբար առավել հավանական է, որ բյուզանդական զորքերը հյուսիս են շարժվում Հրատն մեծ (Թախտ-ի Սուլեյման)—Գանձակ (Լեյլան)—Դեհիառական—Թավրիզ—Ահար—Փայտակարան (աշխարհ)—Վարդանակերտ գծով: Այն հանգամանքը, որ այդ դեպքերի առնչությամբ չի հիշատակվում Թավրիզ քաղաքը, բնավ չի խանգարում առաջարկված երթուղուն, որովհետև Թավրիզը, ըստ երևույթին, պարզապես չի գրավվել բյուզանդական կայսեր կողմից և չի ավերվել: Համենայն դեպս, ելնելով Թեոփանեսի տվյալներից, Հերակլ կայսրը հյուսիս շարժվելիս նոր քաղաքներ գրավելու մեծ հնարավորություններ չունեի, որովհետև ստիպված էր ծանր կռիվներ մղել հետապնդող պարսկական զորքերի դեմ և կորցրեց ձեռք բերած 50000 զերիններին¹⁰³: Մեր կողմից առաջարկված երթուղու դեպքում Մարաց ամուր աշխարհը համապատասխանում է անշուշտ ներկայիս Ղարադաղին¹⁰⁴ կամ Վասպուրականի՝ Կոտոր գետից դեպի արևելք ընկած հատվածին, որ հայտնի էր նաև Մարդպետական անունով: Նման մոտեցման դեպքում Սեբեոսի տեղեկությունները իրար չեն հակասում և մեծապես օգնում են մյուս սկզբնաղբյուրների տեղեկությունների ընկալմանն ու բացատրությանը: Ինչ վերաբերում է Փայտակարանին, ապա կասկածից վեր է, որ պատմիչն ի նկատի ունի ոչ թե քաղաքը, այլ աշխարհը:

¹⁰⁰ Я. М а н а н д я н. Маршруты персидских походов императора Ираклия. с 381—384.

¹⁰¹ Նույն տեղում, էջ 383:

¹⁰² История епископа Себеоса, перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц. Ереван, 1939, с. 93.

¹⁰³ Թեոփանեսի խոստովանող, էջ 22—23:

¹⁰⁴ Զնայած Հ. Մանանդյանը Մարաց ամուր աշխարհը նույնացնում է Ղարադաղին, սակայն այդ ճիշտ կարակացությունը չի համապատասխանում նրա առաջարկած երթուղուն:

«Հուդուդ ալ-Ալամ»-ում, ինչպես վերը նշվեց, Արմինիայի մաս էր համարվում ոչ միայն Դեհիստականը, այլև Ահարը: Հստ աչդմ էլ իրավացիորեն հարց է ծագում, թե՛ հենվելով այդ փաստի վրա, կարելի՞ է Մեծ Հայքի թագավորության մաս դիտել Ահար գետի ավազանը: Տեսականորեն նման եզրակացությունը հնարավոր է, սակայն այդ դեպքում Հերակլի գործերի դեպի Փայտակարան շարժման երթուղին պետք է ենթադրել ոչ թե Ահարի վրայով, այլ Թավրիզ—Մարաբ-Արդաբիլ—Փայտակարան գծով, որը, մեր կարծիքով, պարզապես հավանական չէ: 50000 զորիներ ունեցող բյուզանդական զորաբանակը հաղթվ թե դիմեր իրեն չարդարացնող երկար շվերթների, այն անշուշտ կգերադասեր առավել կարճ ուղիները, որովհետև բյուզանդացիներին հետապնդող և մշտական հարձակումների դիմող պարսից զորքերը կարող էին աքցանի մեջ առնել Հերակլ կայսեր զորաբանակը: Ահարի Մեծ Հայքին պատկանելու դեպքում ենթադրելի է նրա Մարաց ամուր աշխարհում գտնվելը, սակայն վերը ցույց տրվեց, որ կայսրը Մարաց աշխարհ չի մտել, հետևաբար դրանով իսկ բացառվում է Ահարի վերաբերելը Մեծ Հայքին:

Մայրաց ամուր աշխարհի տարածքը, անգամ Մեծ Հայքի բազմաթիվ տարածքային անդամահատումներից հետո մնաց Հայկական մարզպանության կազմում: Այդ իրողությունը անուղղակի ձևով արտացոլվել է Սեբեոսի վերը բերված իրորոգ տեղեկության մեջ: Վահրամ Չուբինը խոստանում է վերականգնել Մեծ Հայքի թագավորությունը իր նախկին սահմաններով և հայ նախարարներին ուղարկած իր հրովարտական հիշատակում է այն հատվածները, որտեղ Մեծ Հայքը տարածքային կորուստներ էր կրել: Նշված երկրամասերի ցանկում բացակայում է Մարաց ամուր աշխարհի հիշատակությունը, որը, մեր կարծիքով, անուղղակիորեն հավաստում է Մարաց ամուր աշխարհի սահմանագծի այնպիսի հատվածում գտնվելը, որտեղ տարածքային կորուստներ Հայաստանը չէր ունեցել: Այդ միանգամայն համապատասխանում է Մարաց ամուր աշխարհի առաջարկված տեղադրությանը:

Մենք առկա նյութի ընձեռած հնարավորությունների շրջանակում քննությունն առանք հայոց թագավորների Ատրպատականի ձեռնարկի իշխանության երկրի տարածքն ու սահմանները: Արդ պարզենք, թե ինչպիսի՞ ելևէջներ և զարգացում ապրեց այն իր ծագումից մինչև վերացումն ընկած շրջանում: Ձեռնական իշխանությունը հանդես եկավ Տրդատ I-ի գահ բարձրանալով և այդ իրավական վիճակը պահպանվեց մինչև 226 թ., մինչև Պարթևական թագավորության անկումն ու Մասանյան թագավորության հաստատումը Պարսկաստանում: Նշված ժամանակաշրջանում այն լուրջ անվանապես էր համարվում Պարթևական թագավորության մաս և փաստորեն վերածվել էր Մեծ Հայքի թագավորության սովորական երկրամասի: 226 թ. սասանյան հեղաշրջումից հետո, երբ Արշակունիների հարստության համակարգում ավազությունն անցավ հայ Արշակունիներին, այդ հողերը և՛ de facto, և՛ de jure մտան Հայոց թագավորության մեջ: III դարի խռովահույզ ժամանակաշրջանում ժամանակ առ ժամանակ Հայոց թագավորությունը ռազմական էր ենթարկվում պարսկական զորքերի կողմից: Չկամենալով առաջ բերել հայ ժողովրդի դժգոհությունն ու ապստամբության տեղիք տալ, պարսից արքունիքը սկզբում հանդուրժեց Արտավազդ V-ի գահակալությունը Հայաստանում: Ծանաչելով հանդերձ Հայոց թագավորության գոյությունը, Մասանյանները հավանաբար չընդունեցին և չճանաչեցին ձեռնական իշխանության տարածքի անցումը Մեծ Հայքի թագավորությանը, որի արդյունքը եղավ հիշյալ կալվածքների միացումը Պարսկաստանի բուն տիրույթներին: Վարչաքաղաքական այդ կացությունը, մեր կարծիքով, իր արտացոլումն է գտել «Աշխարհացույցում», որտեղ Մեծ Հայքը նկարագրված է առանց Ատրպատականի ձեռնական իշխանության երկրի, Դասն, Նիհորական և Մահկերտ-տուն գավառների և անդրտիգրիսյան տիրույթների, որոնք տա-

դաժվում էին մինչև Մծբին¹⁰⁵։ Աշխարհացույցյան Մեծ Հայքը նկարագրված սահմաններով, ինչպես ցույց են տալիս Փավստոս Բուզանդն ու այլ չեղինակներ, գոյություն չունեն IV և առավել ևս V դարում։ Վերջինս բնավ էլ նույնական չէր նաև պտղոմեոսյան Մեծ Հայքին, ուստի ասվածի լույսով մենում է ենթադրել, որ աշխարհացույցյան Մեծ Հայքը նշված սահմաններում արդեն չէր III դարի պատմաքաղաքական զարգացման։

Սասանյան Պարսկաստանը, որ նպատակ ուներ վերականգնել Աքեմենյան պետության սահմանները, անշուշտ հարմար առիթի էր սպասում վերջ տալու հայկական թագավորությանը։ Այդպիսի առիթ հանդիսացավ Արտավազդ V-ի փոքրիշատե ինքնուրույն քաղաքականությունը, որը և հանգեցրեց նրա գահընկեցությանը։ Սակայն հայ-պարսկական երկարատև կռիվները և հայ ժողովրդի համառ դիմադրությունը պարսկական զավթիչներին ցույց տվեցին պարսից արքունիքին, որ առավել անվտանգ է հարցի լուծման պարթևական տարբերակը։ Ինչպես ժամանակին Պարթև Արշակունիները հայ ավազանու համաձայնությամբ հիմք էին դրել Արշակունյաց Մեծ Հայքի թագավորությանը, այդպես էլ պարսից արքունիքը հայոց գահը հանձնեց Սասանյան հարստության ներկայացուցիչներին։ Մեծ Հայքում աշխարհային մեծ թագավոր տիրողոսով իշխեցին Որմիզդ-Արտաշիլը, նրա որդի Որմիզդակը և ներսահը։ Եվ եթե մինչև Սասանյանները Մեծ Հայքը Պարթև Արշակունիների հարստության երկրորդ թագավորությունն էր, իսկ հայոց թագավորն էլ Պարթևական թագավորության երկրորդն էր, ապա այժմ նույն վիճակը գրեթե վերականգնվեց։ Մեծ Հայքը վերածվեց Սասանյան արքայատոհմի երկրորդ թագավորության¹⁰⁶, իսկ հայոց թագավորության Սասանյան գահակալն էլ դարձավ Պարսից թագավորության երկրորդ։ Պատահական չէ, որ անգամ հայոց հոսքով թագավորը Ագաթանգեղոսի կողմից համարվում է ոչ թե Պարթևական թագավորության երկրորդ, այլ Պարսից տերության¹⁰⁷։ Այդ կարելի է բացատրել երկու կերպ։ Կամ հայերը Պարթևական թագավորությունը ավանդույթի ուժով կոչում էին Պարսից պետություն, կամ էլ ուշ շրջանի վիճակը արտացոլվել է Ագաթանգեղոսի երկրում առավել վաղ շրջանի իրողությունները մատուցելիս։ Վերածելով Մեծ Հայքը Սասանյան արքայատոհմի երկրորդ թագավորության և հայոց թագավորին էլ դարձնելով պետության երկրորդ, պարսից արքունիքը ստիպված էր և վերականգնեց ձեռնական իշխանության հաստատությունը, այլ խոսքով՝ հայոց Սասանյան գահակալը նույնպես դիտվում էր Պարսից պետության գործակալ և գործակալական ժառանգության համար ստանում էր ձեռնական իշխանության կալվածքներ։ Ըստ երևույթի պարսից գահակալները առանձնապես շոայություն հանդես չբերեցին և Մեծ Հայքի Սասանյան արքայատոհմի գահակալները ստացան հայ Արշակունիների երեքմեկի ձեռնական իշխանության երկիրը։ Ստեղծված վիճակը գոյատևեց մինչև Մծբինի 298 թ. քառասնամյա հաշտությունը և Տրդատ III-ի գահակալությունը ամբողջ Մեծ Հայքում։

Մծբինի 298 թ. հաշտությունը հնարավոր եղավ շնորհիվ 297 թ. Բասենի ճակատամարտի, որտեղ հայ-հռոմեական զորքերը փայլուն հաղթանակ տարան պարսից բանակի նկատմամբ, գերելով բազմաթիվ պարսից մեծամեծների, արքայից արքա Ներսեսի կանանոցը և կողոպտելով պարսից բանակատեղի¹⁰⁸։ VI դարի բյուզանդական պատմագիր Պետրոս Պատրիկիոսի

¹⁰⁵ Աշխարհացույց Մովսեսի Խորենացու, էջ 29—35։ Ագաթանգեղոս, էջ 439 (§ 842)։ Նիզիկի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 10։ В. А. Арутюнян. Административное деление закавказских владений сасанидского Ирана согласно труду Елише.—Кавказ и Византия, вып. 1, Ереван, 1979, с. 20—21.

¹⁰⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 49։

¹⁰⁷ Ագաթանգեղոս, էջ 15 (§ 18)։

¹⁰⁸ Բ. Հարությունյան. Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչաքաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1982, № 2, էջ 79—93։

վկայությամբ Մեծ Հայքի սահմանները ընդարձակվեցին մինչև Զինթա ամ-
րոցը, որը գտնվում էր Մարաստանում¹⁰⁹։ Թե որտե՞ղ է գտնվել Զինթան,
մինչև այսօր էլ գիտական վեճի նյութ է, սակայն անկախ նրա տեղագրու-
թյունից, Պետրոս Պատրիկիոսի տեղեկությունը անբավարար է պատասխան
տալու այն հարցին, թե Ատրպատականի ձեռնարկի իշխանության երկիրը
միացվե՞ց Մեծ Հայքին, թե՞ ոչ։ Հարցը ավելի է խճողվում՝ կապված Փավս-
տոս Բուզանդի հակասական տեղեկությունների հետ։ Պատմիչի հաղորդ-
մամբ պարսից արքա Շապուհ II-ը Արշակ II-ին է տալիս Ատրպատակա-
նում երկրորդական տունը, որ ոչ այլ ինչ է, բայց եթե ձեռնարկի իշխանու-
թյան երկիրը։ «Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքան Պարսից
զթագաւորն Հայոց զԱրշակ. և մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով և մե-
ծաւ փառօք, բազում գանձու ոսկւով և արծաթով ամենայն մեծութեամբ թա-
գաւորութեանն։ Սւ իբրև զեղբայր որպես ղորդի գրգեալ եղև ի նմանէ, և երկ-
րորդական ղմեծ տունն տայր նմա յԱտրպատական աշխարհին»¹¹⁰։ Բնական է
ենթադրել, որ գործակալական ծառայության դիմաց գտնվող երկրամասը
առաջին իսկ պահանջով պետք է վերադարձվեր Պարսկաստանին, սակայն
զարմանալիորեն Ատրպատականի ձեռնարկի իշխանության երկիրը ապս-
տամբում է Արշակ II-ի դեմ, իսկ Պապ թագավորի օրոք վերստին միացվում
Մեծ Հայքի թագավորությանը։ Մեր կարծիքով, 398 թ. ձեռնարկի իշխանու-
թյան երկիրը միացվում է Մեծ Հայքի թագավորությանը, հանգամանք, որ
անուղղակիորեն վկայված է Փավստոսի՝ մագթթաց Սանեսան թագավորի դե-
պի Հայաստան կատարած արշավանքի նկարագրության մեջ։ Մագթութենները,
ինչպես վերը արդեն նշել ենք, ասպատակության են ենթարկում մինչև Ա-
տրպատականի Գանձակ քաղաքն ընկած հողերը, որը հավաստի տվյալ է
նշված երկրամասի Մեծ Հայքի մեջ գտնվելու օգտին։ Հիշյալ տարածքն ան-
ցել էր հայոց թագավորությանը, սակայն տեղի տալով ռազմական ուժին և
զիջելով Ատրպատականի ձեռնարկի իշխանության երկիրը, պարսիկները չէին
ճանաչել վերջինիս նկատմամբ հայ Արշակունի գահակալի իրավունքը որպես
Պարսից պետության երկրորդի։ Արշակ II-ի իշխանության առաջին շրջանում
նկատվում է հայ-պարսկական հարաբերությունների որոշ լքերմացում, որը
և ստիպում է Սասանյաններին որոշ չափով փոխել իրենց վերաբերմունքը
տոհմական հակառակորդ հայ Արշակունիների նկատմամբ, պատրաստակա-
մություն հանդես բերել ճանաչելու նրանց երկրորդի իրավունքը Պարսից
պետության մեջ և ընդունելու հայ Արշակունիներին Սասանյան հարստու-
թյան համակարգի մեջ։ Այլ խոսքով Շապուհ II-ը հայոց թագավորին տա-
լիս էր մի երկրամաս, որ միջազգային պայմանագրով և փաստորեն պատ-
կանում էր վերջինիս։ Որ Ատրպատականի ձեռնարկի իշխանության երկիրը
հայոց արքունիքը դիտում էր Մեծ Հայքի թագավորության անկապտելի մաս,
պարզ ի հայտ եկավ Պապ թագավորի օրոք, երբ Մուշեղ Մամիկոնյան սպա-
րապետը, ճնշելով անջատողական տարրերին, այն կրկին միացրեց թագավո-
րությանը։ Ատրպատականի ձեռնարկի իշխանության հետագա ճակատագրի
մասին սկզբնաղբյուրները դժբախտաբար տեղեկություններ չեն պահպանել,
սակայն դժվար չէ ենթադրել, որ Պապ պահպանվեց Մեծ Հայքի կազմում մինչև
նրա 387 թ. բաժանումը։ Ս. Նրեմյանը հակված է կարծելու, որ կալվածքնե-
րը պատկանել են Հայ Արշակունիներին թերևս մինչև 428 թ., մինչև Հայ
Արշակունյաց թագավորության անկումը¹¹¹։ Այս ենթադրությունը ոչ միայն
հավանական չէ, այլև հակասում է հեղինակի այն տեսակետին, թե 387 թ.
Մեծ Հայքի թագավորությունը զրկվել էր իր ժայռամասալին աշխարհնե-

¹⁰⁹ Petrus Patricius. Fragn. 14, տե՛ս Dindorf, Historici graeci minores, I, p. 443.

¹¹⁰ Փավստոս Բուզանդ, IV, ԺԶ։

¹¹¹ Ս. Ն. Նրեմյան. Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդա-
լականացող Հայաստանում, էջ 6։

րից¹¹²։ Նախ, շատ կասկածելի է, որ պարսից արքունիքը ճանաչել է իրենց մադեմի հզորությունն ու ազդեցությունը կոոցրած հայոց թագավորների Պարսից տերության երկրորդի իրավունքը, իսկ եթե անգամ ընդունենք այդ իրողությունը, ապա պետք է պատասխան տանք այն հարցին, թե ինչու հայոց թագավորներին ձեռնական իշխանության երկիր տվող Սասանյանները անդամահատում են Հայոց թագավորությունը և նրանից անջատում մի շարք երկրամասեր 387 թ. և դրանից հետո։ Դժվար չէ համոզվել, որ 387 թ. հայոց թագավորների ձեռնական իշխանության երկիրը դադարեց գոյություն ունենալուց և միացվեց պարսից բուն տիրույթներին, եթե իհարկե այն պարսիկները չէին գրավել IV դարի անհանգիստ 80-ական թթ.¹¹³։

Մեզ մնաց քննարկելու հայոց թագավորների ձեռնական իշխանության կալվածքների խնդիրը Հռոմեական կայսրության կազմում։ Հարցն այստեղ առավել բարդ է նյութի սակավության և անորոշության իմաստով։ Արդ որո՞նք են այդ փաստերը։ Դիոն Կասիոսը, անդրադառնալով III դարի սկզբի իրողարձույթներին, հայտնում է, որ «այսուհանդերձ հայոց (թագավորի) դեմ նրա մղած պատերազմը ևս, ինչպես ասել եմ, դադարեց, երբ Տիրիդատեսը (Տրդատ II-ը—Հ. Բ.) ընդունեց Մակրինոսի կողմից իրեն ուղարկված թագը, ինչպես նաև մորը, որին Տարավտասը տասնմեկ ամիս պահել էր բանտում, ինչպես նաև ստացավ այն ամբողջ ավարը, որ տարված էր Հայաստանից և բոլոր այն երկրները, որ նրա հայրը ձեռք էր բերել Կապադովկիայում։ Նա հույս ուներ նաև ստանալու այն փողը, որ ամեն տարի ուղարկում էին Հռոմեացիները»¹¹⁴։ Տեղեկությունն անորոշ է, որովհետև Կապադովկիա պրովինցիան III դարում ընդարձակ տարածություն էր զբաղեցնում և նրա մեջ էին մտնում Եփրատից արևմուտք գտնվող հայկական երկրամասերը։ Սակայն որոշակի է մի հանգամանք, որ կալվածքները ստացել է ոչ թե Տրդատ I-ը, ինչպես ենթադրում է Ս. Երեմյանը, այլ Տրդատ II-ի հայրը՝ խոսքով I-ը։ Պատմիչն այնքան որոշակիորեն է ընդգծում մասնավորապես խոսքով I-ի կողմից կալվածքներ ձեռք բերելու պարագան, որ մեր կարծիքով մինչև խոսքով I-ի գահակալությունը հայոց թագավորները բնավ էլ կալվածք չեն ունեցել կայսրության սահմաններում։ Անշուշտ, իրավացի հարց է ծագում, թե ինչու հիշյալ կալվածքների սկզբնավորումը կատարվեց խոսքով I-ի իշխանության տարիներին։

Արշակունյաց հարստության Հայաստանում հաստատվելուց հետո Մեծ Հայքի թագավորությանը առաջին հերթին վտանգ էր սպառնում Հռոմի կողմից։ Դրանով էլ բացատրվում է հայ-պարթևական բարեկամական հարաբերությունների պահպանումը գրեթե մինչև Պարթևական թագավորության անկումը։ Հռոմը, որ կամենում էր փոխել ստեղծված կացությունը և վերածել Մեծ Հայքը հռոմեական պրովինցիայի, անընդհատ բախվում էր հայ ժողովրդի հուժկու դիմադրությանը և ստիպված եղավ հանդուրժել Հայոց թագավորության գոյությունը։ Սակայն հայ-պարթևական հարաբերությունները մթադնող մի հանգամանք կար, որը և Պարթևական թագավորության թուլացման շրջանում նպաստավոր հող ստեղծեց հայ-հռոմեական ապագա մեր-

¹¹² Ն. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացայց»-ի, էջ 69—70։

¹¹³ Կատարված քննությունը ցույց է տալիս, որ Հ. Մարկվարտը սխալվում է Մարաց ամառ տեղադրելով Մասիս լեռան և Գողթն գավառի միջև, հիմք ընդունելով Մովսես Խորենացու տեղեկությունը Տիգրան Երվանդյանի կողմից Աժդահակի ընտանիքը և շուրջ 10000 զորիներ Արաքսի հովիտը տեղափոխելու մասին (J. Markwart. Die Entstehung und Wiederherstellung der armenische Nation. 1919, S. 31: Մովսես Խորենացի, I, 1 (Ա), Ս. Կանայանց. Անհայտ գավառներ հին Հայաստանի, էջ 54 և հտ. 2. Մանանդյան. Երկեր, հ. 5, էջ 319)։

¹¹⁴ Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասիոս, Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի. Երևան, 1976, էջ 224։ Հ. Առաքելյան. Փաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Հռոմի մ. 190-60-ն. Ք. մինչև 428 հ. Ք., Կենետիկ, 1912, էջ 230։

ձեցման համար: Պարթև Արշակունիները աշխատում էին ոչ մի կերպ թույլ չտալ Մեծ Հայքում Արշակունյաց ժառանգական հարստության հանդես գալը, որին ընդհանրապես անընդհատ հակադրվում էին Մեծ Հայքի թագավորները: Սովորաբար հայոց թագավորի մահից հետո պարթևական արքունիքը Մեծ Հայք էր ուղարկում Արշակունի նոր գահակալի, որը անմիջական արյունակցական կապեր չէր ունենում մահացած թագավորի հետ: Հայոց Արշակունի թագավորները երբեմն կարողանում էին այդ կարգը խախտել և գահը փոխանցել իրենց զավակներին, սակայն այդ անել մեծ մասամբ չէր հաջողվում: Ժամանակի ընթացքում զգալիորեն թուլացավ նաև Հռոմը, որի քաղաքականությունը Մեծ Հայքի թագավորության նկատմամբ արմատապես փոխվեց: Այժմ նրա արտաքին քաղաքականության խնդիրը դարձավ Մեծ Հայքի թագավորության պահպանումն ու հռոմեական ազդեցության ոլորտի մեջ ներառումը: Հայ-հռոմեական մերձեցումը տեղի ունեցավ Սեպտիմիոս Սևերոս կայսրի օրոք, երբ հայոց թագավորը մերժեց կայսեր դեմ ապստամբած Նիգեմիոսի օգնություն ցույց տալ և գաղտնի բանակցությունների մեջ մերտապես Սևերոսի հետ: Իսկ երբ Նիգեմիոս պարտություն կրեց և կայսեր զորքերը մոտեցան Եփրատի սահմանագլխին, հայոց թագավորը նրան նվերներ ու պատանդներ ուղարկեց և առաջարկեց խաղաղության դաշն կնքել, որին հռոմեական կողմը համաձայնություն հայտնեց¹¹⁵: Հայոց Վաղարշ II թագավորի և Սեպտիմիոս Սևերոսի միջև կնքված պայմանագրի համաձայն Մեծ Հայքի թագավորությունը, ինչպես և նրա ազդեցության ոլորտում գրտնըվող Վիրքի և Աղվանքի թագավորությունները ներառվեցին Կապադովկյան զինվորական համակարգի մեջ և, ինչպես ենթադրում է Հ. Մարկվարտը, Հայոց թագավորության վրա դրվեց Կովկասյան անցքերի պաշտպանությունը, որի համար կայսրությունը պարտավորվում էր ամեն տարի դրամական նպաստ վճարել¹¹⁶: Արևելքի դեմ մղած կռիվներից մեկում, հավանաբար 198 թ., սպանվում է Վաղարշ II-ը, և գահ բարձրացած Խոսրով I-ը մեծ արշավանք է ձեռնարկում հյուսիսային կովկասյան լեռնականների դեմ հոր վրեժն առնելու համար: Նրանց հաղթելուց հետո նա հավաստում է իր հավատարմությունը հռոմեացիներին. «Եւ զիւրոյ տէրութեանն նշանակ՝ արձան հաստատէ հելլենացի գրով, որպէս զի յայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել Հռոմայեցոց»¹¹⁷: Եթե Վաղարշ II-ը լոկ բարեկամական հարաբերությունների հիմքն էր դնում, ապա Խոսրով I-ը, դեռ Պարթևական թագավորության գոյության պայմաններում, դառնում էր Հռոմի արևելյան քաղաքականության կենսագործողը Կովկասում և մասամբ արևելքում: Բնական է ենթադրել, որ նրա ժառանգությունները պետք է վարձատրվեին, որի արդյունքը եղավ նրան կայսրության սահմաններում կալվածքներ շնորհելը: Այն ոչ միայն վարձատրություն էր ժառանգության դիմաց, այլև Մեծ Հայքի թագավորությունը կայսրությանը կապելու և մերձեցնելու միջոց: Խոսրով I-ից հետո, թեկուզև հնարավոր որոշ ընդմիջումներով, հիշյալ կալվածքները պատկանեցին հայ Արշակունիներին մինչև Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումը կամ էլ, որ չի բացառվում, մինչև Արշակ III-ի մահը: Որ այդ կալվածքները իրոք շարունակում էին պատկանել հայոց թագավորներին, պարզ երևում է Թեոդոսիոսի «Codex»-ից, համաձայն որի Կոստանդինոս կայսրը, հանդես բերելով բարյացակամություն Արշակ II-ի նկատմամբ, հարկից ազատում է հայոց թագավորի՝ կայսրության սահմաններում գտնվող կալվածքները¹¹⁸: Կարևորությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ խոսք չի

115 2. Աստուրյան. նշվ. աշխ., էջ 224—225:

116 J. Marquart. Erānšahr, S. 162. Հայ ժողովրդի պատմություն, 4. II. էջ 790:

117 Մովսես Խորենացի, II, 46:

118 Codex Theodosianus, XI, 1, 1: 2. Աստուրյանը ցույց է տալիս, որ այս օրենքը սխալմամբ է վերագրվում Կոստանդինոս Մեծին, որովհետև նրանում հիշվում են Դատիանոս հյուպատոսը (358-ին) և հայոց Արշակ II թագավորը, որոնք երկուսն էլ ապրել են Կոս-

զնում կալվածքները ձեռք բերելու կամ վերստանալու վերաբերյալ, որ էապես խոսում է դրանց հայոց թագավորներին հաջորդաբար անցնելու մասին:

Մեզ հասած տվյալներից ոչ մի կերպ հնարավոր չէ հետևեցնել, թե մասնավորապես որտեղ էին հայոց թագավորների ձեռնական իշխանության կալվածքները, սակայն մի բան որոշակի է. որ նրանք չեն գտնվել Մեծ Հայքի սահմանակցությամբ: Ինչպես ցույց տվեց հայոց թագավորների Ատրպատականի ձեռնական իշխանության երկրի քննությունը, վերջինս, գտնվելով Մեծ Հայքի անմիջական հարևանությամբ, ի վերջո մաս էր կազմել Հայոց թագավորության: Եթե կայսրության սահմաններում գտնվող կալվածքներն էլ սահմանակից լինեին Մեծ Հայքին, ապա նրանք ես. եթե ոչ լրիվ, ապա որոշ չափով կներառնվեին թագավորության քաղաքական ոլորտը և անշուշտ որևէ ձևով կարտացոլվեին նաև հայկական սկզբնաղբյուրներում: Տեսակետորեն, անշուշտ, հիշյալ կալվածքները կարելի է տեղադրել Փոքր Հայքի տարածքում, որովհետև վերջինս՝ մինչև Դիոկլետիանոսի վարչական բարեփոխումները, մտնում էր Կապադովկիա պրովինցիայի մեջ: Սակայն առարկությունը Փոքր Հայքում պարզապես բացառվում է: Ասենք, որ 1971 թ. նա նույնպես այն կարծիքին էր, որ «նրանց տեղադրությունը որոշել հնարավոր չէ» և «մենք այլ տեղեկություններ չունենք որևէ ուրիշ ենթադրություն անելու»¹¹⁹:

Այսուհանդերձ, մեր կարծիքով, պատմությունը մեզ համար պահպանել է որոշ անուղղակի փաստեր, որոնց օգնությամբ տեղորոշվում են հայոց թագավորների կալվածքները կայսրության սահմաններում: Դեռևս մի քանի տարի առաջ մեր ուշադրությունը գրավեց այն իրողությունը, որ Նիկիայի ժողովում Մեծ Հայքի կաթողիկոսության անունից ստորագրողների մեջ գտնվում էին Ամասիայի, Կոմանայի և Զելայի եպիսկոպոսները, որոնց եկեղեցական թեմերը տարածքային իմաստով Մեծ Հայքի հետ առնչվել չէին կարող: Ստորագրողների մեջ հիշատակվում էր նաև ոմն «Ակրիտէս ի Պէէնպողէ», որի եկեղեցական թեմը քաղաքանվան աղավաղվելու հետևանքով դժվար էր որևէ տարածքի հետ նույնացնել: Հետագա քննության շահերից ելնելով, մեջ բերենք Նիկիայի ժողովում Փոքր Հայքը, Մեծ Հայքը և Պոնտոսը ներկայացնող եպիսկոպոսությունների ցուցակը:

«Ի Փոնոէ Հայոց
Եղադիոս ի Սաբամայէ.
Եւթիոս ի Սատաղայէ.
Ի Մեծաց Հայոց
Առիտագէս Հայոց.
Ակրիտէս ի Պէէնպողէ.
Եւթիանոս յԱմասէ.

Հեղադիոս ի Կոմանէ.
Հեռակդիոս ի Զեղոնէ.
Ի Պոնտացոց Կաթմանէ
Ղանկինոս ի Նէոկեսարեայ.
Դոմնոս ի Տրապիզոնտէ.
Նտրատոփիլա ի Բիտիանոսէ.»¹²⁰,

Եթե հրատարակիլը ժամանակին լուրջ ուշադրություն դարձնեք այս համաձայնության վրա, համեմատեք Նիկիայի ժողովի կանոնների հայերեն թարգմանությունը բնագրի և լատիններեն թարգմանության հետ, ապա շատ հարցականներ արդեն այն ժամանակ ի շիք կդառնային: Սակայն այդ չէր արվել, իսկ նշված փաստը որպես այդպիսին միայն կասկածանք էր ներշնչում: Եվ որքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ Տիեզերական ժողովների տրձանա-

տանդիոսի օրոք (էջ 288): Տե՛ս նաև Հ. Գաթրճյան. Տիեզերական պատմություն. հ. Բ, Վիլնյա, 1852, էջ 490:

¹¹⁹ Ս. Ս. Երեմյան. Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում, էջ 6:

¹²⁰ Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վաղգեն Հակոբյանի. հ. Ա, Երևան, 1964, էջ 141:

գրությունների Մանսի¹²¹ հրատարակության մեջ հանդիպեցինք նույն ստորագրություններին.

„Provinciae Armeniae minoris
Eulogius Sebastenus¹²²
Ivetlius Sata'ensis¹²³
Provinciae Armeniae maioris
Arsaphius Sophenensis¹²⁴
Acrites Diospontanus¹²⁵
Eutychianus Amasaeus¹²⁶
Heraclius Zelonensis
Elpidius Erhoniensis Comanus¹²⁷“:

Ինչպես պարզվում է ցուցակների համեմատությունից, Սարամայեն ոչ այլ ինչ է, եթե ոչ Սեբաստիան, իսկ եպիսկոպոսի անվան ճիշտ ձևը՝ Նվդա-դիոս, պահպանել է հայերեն թարգմանությունը: Սատաղի եպիսկոպոսի անունը իրապես եղել է Նվթիոս: Հայտնի է, որ Նիկիայի ժողովին մասնակցելու հրավեր էին ստացել Տրդատ III-ն ու Գրիգոր Լուսավորիչը, սակայն քաղաքական հանգամանքներից ելնելով նրանք ժողով գնալ չկարողացան և իրենց փոխարեն ուղարկեցին Արիստակեսին. «Այլ նոքա առաքեն փոխանորդ իւրեանց ղԱրիստակէս, հանդերձ ճշմարիտ խոստովանութեամբ, երկոցունց գրով»¹²⁸, Արիստակեսը Գրիգոր Լուսավորչի որդին էր և, դատելով Նիկիայի ժողովի տվյալներից, Մովսեսի եպիսկոպոսն էր: Հետևաբար Arsaphias Sophenensis-ը պետք է սրբագրել Aristaces Sophenensis: Որ սրբագրությունը արդարացված է, պարզ երևում է „Canonum Sanctorum Patrum qui apod Niceam sunt conragati“-ից, որտեղ Մեծ Հալքի անունից ստորագրողների մեջ առաջինը հիշվում է Aristarces-ը¹²⁹: Նիկիայի կանոնների հայկական թարգմանության մեջ Ակրիտեսը համարվում է «Պէէէպողէի» եպիսկոպոս, իսկ բնագրում Acrites Diospontanus: Նիկիայի ժողովի կանոնների լատինական խմբագրության մեջ նա հայտնի է Acrites Armeni Diosponti անունով¹³⁰, Ի տարբերություն այլոս եպիսկոպոսների, որոնք ներկայացնում են այս կամ այն քաղաքի եպիսկոպոսությունը, Ակրիտեսը ներկայանում է բնագրում Դիոսպոնտոսի երկրամասի եպիսկոպոս, իսկ հայերեն թարգմանության մեջ՝ Պեւէէպողէ քաղաքի եպիսկոպոս: Ինչպես ցույց է տվել Ն. Ադոնցը, Դիոսպոնտոսը, որ համարվում է Pontus Amasia-ի, Կոստանդին Մեծի օրոք ի պատիվ նրա մոր Հելենիի վերանվանվում է Հելենոպոնտոս¹³¹, Համաձայն «Basilli Notitias»-ի Հելենոպոնտոսի թեմի կենտրոնն էր Ամասիան և նրա եպիսկոպոսական քաղաքներն էին Ամիսոսը, Սինոպը, Իքորան, Անդրապան, Ջալիքոսը կամ Լեոնտոպոլիսը և Զելան:

¹²¹ Joannes Dominus Mansi. Sacrorum Conciliorum Nova et Amplissima collectio, Introductio. 1960, Akademische Druck- u. Verlagsanstalt, vol. 2, 1960, Graz, p. 694.

¹²² Եպիսկոպոսի անունը այլ ձևագրերում Eulalius է, որ համապատասխանում է «Կանոնագիրք Հայոց»-ի տվյալներին:

¹²³ Հանդիպում է նաև Eutychius գրությունում:

¹²⁴ Նաև Arsaphius Sophonensis ձևով:

¹²⁵ Նաև Aristarcea ձևով:

¹²⁶ Նաև Eutychias ձևով:

¹²⁷ Քաղաքանունը հանդիպում է նաև Cotomanen ձևով:

¹²⁸ Մովսես Խորենացի, II, 28.

¹²⁹ Mansi, Vol. 6, էջ 1136.

¹³⁰ Նույն տեղում:

¹³¹ Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 85—86.

Ἐπαρχία Ἐλενοποντίου ὁ Ἀρσείας. α. ὁ Ἀμισσῶ. β. ὁ Σινωπης. γ. ὁ Ἰβόρων. δ. ὁ Ἀνδραπών. ε. ὁ Ζαλίχου ἤτοι Δεοντουπελεως. ζ. ὁ Ζηλῶν.¹³²

Հարցի քննության համար մեծ կարևորություն է ներկայացնում «Nova Tactica»-ի Հելենոպոնտոսի նկարագրությունը.

Τη Ἀρσεία Ἐλενοποντίου. α. ὁ Ἀμισσῶ. β. ὁ Σινωπης. γ. ὁ Ἰβόρων. δ. ὁ Ἀνδραπών. ε. ὁ Ζαλίς ἤτοι Περπηίουπελεως.¹³³

Բերված տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ «Nova Tactica»-ի «ὁ Ζαλίς»-ն «Basilii Notitia»-ի «ὁ Ζαλίχου»-ն է, հետևաբար Զալիքոսը կոչվել է ոչ միայն Հենտուպոլիս, այլև Պոմպեյուպոլիս: Հենց այս վերջին անվանումն էլ աղավաղվել է հայկական թարգմանության մեջ անճանաչելիության աստիճանի և վերածվել «Պէէնպոլէ»-ի արտագրությունների ժամանակ: «Basilii Notitia»-ն հիշատակում է Մեծ Հայքի կաթողիկոսության անունից Նիկիայի ժողովում ստորագրած երեք եպիսկոպոսությունների՝ Ամասիայի, Զալիքոսի կամ Պոմպեյուպոլիսի և Զելայի անունները: Չորրորդ եպիսկոպոսության՝ Կոմանայի անունը «Basilii Notitia»-ն հիշատակում է Պոլեմոնիակի մեջ, որտեղ գտնվել են Տրապիզոնը, Կերասունտը, Պոլեմոնիոնը և Կոմանան, իսկ կենտրոնը եղել է Նեոկեսարիան¹³⁴. Համաձայն «Nova Tactica»-ի Պոլեմոնիական Պոնտոսի մեջ էին Կերասունտը, Պոլեմոնիոնը, Կոմանան և կենտրոնն էր (Նեո)կեսարիան¹³⁵. Կատարված քննությունը ցույց է տալիս, որ Հելենոպոնտոսը ամբողջությամբ չէ, որ համընկնում էր Դիոսպոնտոսին, որի մեջ, ինչպես կտեսնենք, գտնվում էր նաև Կոմանան: Նիկիայի ժողովի ժամանակ Դիոսպոնտոսը պետք է ներկայացնեք Ամասիա, Կոմանա, Զելա, Զալիքոս, ինչպես նաև Ամիսոս, Սինոպե, Իբորա և Անդրապա քաղաքները իրենց շրջակա տարածքով: Առաջին շրջի եպիսկոպոսները Նիկիայի ժողովում հանդես են եկել Մեծ Հայքի կաթողիկոսության անունից: Ինչո՞ւ Բացատրությունը մեկն է: Հիշյալ քաղաքները իրենց շրջակայքով կազմել են հայոց թագավորների ձեռնարկյալ իշխանության կալվածքները, իսկ Դիոսպոնտոսի հիշյալ քաղաքների եպիսկոպոսություններն էլ այդ պատճառով ենթարկվել են Մեծ Հայքի կաթողիկոսությանը: Հայոց թագավորների կալվածքների կենտրոնը, հավանաբար, եղել է Պոմպեյուպոլիս քաղաքը, ուստի վերջինիս եպիսկոպոսը հանդիսացել է Դիոսպոնտոսի հայկական կալվածք հանդիսացող եպիսկոպոսությունների գլխավորը և այդ պատճառով էլ կոչվել է Acrites Diospontanus և անգամ Acrites Armeni Diospontii. Վերջին անվան տակ կարելի է հասկանալ Հայկական Դիոսպոնտոսի եպիսկոպոս Ակրիտես, որի աթոռանիստը համաձայն «Կանոնագիրք Հայոց»-ի Պոմպեյուպոլիս քաղաքն էր, ուստի որպես եպիսկոպոս նա ներկայացնում էր ամենից առաջ հիշյալ քաղաքը: IV դարում, երբ Պապ թագածառանգը փախավ Հռոմեական կայսրություն պարսկական արշավանքների պատճառով, կայսրը՝ ըստ Ամիանոս Մարկեղիսի, նրան հաստատեց Նեոկեսարիայում, հատկացնելով նրա կողմանը արժանի ուտեստ¹³⁶: Դժվար չէ տեսնել, որ Ամիա-

¹³² Basilii Notitia, աե՛ս Georgii Cypril Descriptio orbis Romani, edidit praefatus est commentario instruxit Henricus Gelzei, Lipsiae, 1890, p. 13—14.

¹³³ Նույն տեղում, էջ 67:

¹³⁴ Նույն տեղում, էջ 15:

¹³⁵ Նույն տեղում, էջ 68:

¹³⁶ Ammianus Marcellianus, with an English Translation by John C. Rolfe, in three Volumes, III, London, 1972, XXVII, 12, 9: «Haec inopina defectio, necesque insperatae Persarum, inter nos et Saporem discordiarum excitavere causas immanes, illo etiam accedente, quod Arsacis filium Papam, suadente matre cum paucis e munimento digressum, susceptumque Imperator Valens apud Neocaesaream morari praecepit, urbem Polem oniaci Ponti notissimam, liberali victu curandum et cultu»:

նորոգ առանց հասկանալու ակնարկում է հայոց թագավորների ձեռակալան իշխանությունների կալվածքների մասին: IV դարի 60-ական թթ. Կոմանան պետք է վարչականորեն գտնվեր Պողեմոնական Պոնտոսում, ուստի միանգամայն պարզ է, որ արքայաժառանգ Պապը եկել էր իր հայրական կալվածքները որոնց, չի բացառվում, որ Վազես կայսրը ավելացրել էր նաև Նեոկեսարիա քաղաքը: Եթե անգամ Նեոկեսարիան չէր տրվել Պապին և լուկ հանդիսանում էր նրա հանգրվանը, պարզ է, որ նրա գտնվելը այդ քաղաքում պատահական էր, որովհետև նրա գրեթե հարևանությամբ գտնվում էին ձեռակալան իշխանությունների կալվածքները: Անդրադառնալով Արմենիականների բանակաթեմին, Կոստանդին Միրանաթինը գրել է. «Արմենիականների կոչված բանակաթեմի հատուկ անունը չէ դա, այդ հորջորջումն էլ հին չէ: Նա իր անունը պարտական է սահմանակից և տեղում ապրող հայերին: Ծա ենթադրում եմ, որ այդ անունն ստացավ անցյալում, Հերակլ կայսեր ժամանակ: ...Երրորդ Կապադոկիան, որ այժմ կոչվում է Արմենիականների, ունի յոթ քաղաք. Ամասիա, Իբորա, Զալիխոս, Անդրապա, Ամիսոս, Նեոկեսարիա, Մինոպեա»³⁷: IV դարի սկզբի Դիոսպոլիսոսի համեմատությամբ այս ցուցակում պակասում են Կոմանան և Զելան, սակայն ավելացել է Նեոկեսարիան: Եթե մի պահ վերանայեք Նեոկեսարիայի գոյությունից, պապ հիշյալ վարչական շրջանները պարզապես համընկնում են, ուստի մենք կարծում ենք, որ բանակաթեմը ոչ թե իր անունն էր ստացել տեղում ապրող և սահմանակից հայերի անունից, այլ հայոց թագավորների ձեռակալան իշխանության կալվածքների անունից, որոնք սկզբում ոչ պաշտոնապես, իսկ ավելի ուշ պետականորեն հորջորջվել են Արմենիական:

Արդ, ինչպիսի՞ որոշակի տարածք էին զբաղեցնում հիշյալ կալվածքները: Ամասիա և Զելա քաղաքները մինչև այսօր էլ պահպանել են իրենց աշտանները, Զալիքոսը ներկայումս կոչվում է Ալաշամ, իսկ Կոմանան՝ Գյումենեկ¹³⁸: Հետևաբար հայոց թագավորների ձեռական իշխանության կալվածքների սահմանները¹³⁹ մոտավորապես հետևյալ տեսքով: Մոտավորապես ներկայիս Զայաղզը բնակավայրի արևելակողմով սահմանը, սկսվելով Սև ծովի ափերից, ջրբաժան գծով շարժվում էր մինչև Ղըղըլ-Լըմազ կամ Ալիս գետը: Հատելով այն, սահմանը շարունակվում էր, ամենայն հավանականությամբ, մինչև ներկայիս Յովալա լեռնագագաթը և Մարդվանի արևմտակողմով ու Զրոումի արևելակողմով հասնում Զեքերեկ գետին: Վերջինիս և Մեջիդյուզլու գետի ջրկիցից շարժվում էր հարավ-արևելք և, շրջան գործելով Զելայի շուրջ ու արևելակողմում թողնելով Թուրքալ-Իբորան, հասնում էր ներկայիս Զամի լեռը, որտեղից այն իջնում էր հարավ-արևելք և մոտավորապես Թոքատի շրջանում դուրս գալիս Նշիլ-Լըմազ գետը: Ներառնելով Կոմանան իր շրջակայքով, սահմանը շարժվում էր հյուսիս և Նիկսար-Նեոկեսարիայի արևմտակողմով հասնում ներկայիս Զանիկի լեռնաշղթա: Այնուհետև սահմանը անցնում էր լեռնաշղթայով և, հատելով Նշիլ-Լըմազ գետը, հասնում Մուրաթ գետի ակունքներին, որտեղից ընթանում էր ներկայիս Թուրքմենչիք բնակավայրի արևելակողմով հասնում Ղըղըլ-Լըմազ կամ Ալիս գետին: Այստեղից, հավանական է ենթադրել, որ սահմանն անցել է գետով և շարունակվել մինչև ծովը: Մենք սահ-

137 Կոստանդին Միրանաձիճ, թարգմանություն ղևազրից, առաջաբան և ծանոթագրու-
թյուններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1970, էջ 167, 169:

138 3. 9. 4. Անդերսոնի. Հետազոտական ուղեորություն ի Պոնտոս. Վիեննա, 1919, էջ 191. Փր. և Նիվ. Կրուժոն. Ուղեորություն հնախոսական հետազոտության ի Պոնտոս և ի Փոքր Հայս. Վիեննա, 1919, էջ 262:

139 Ս. Տ. Երեմյանի կարգիքով, ինչպես արդեն նշվել է, ձեռական իշխանություն երկիր
 չէր նաև Աբառեն-Վաղարշակուպոլսը Գիմաթենն գաղառով: Հեղինակը սկզբնաբար չի
 հղում, իսկ մեղ առաջմ նման տվյալ հայտնի չէ, ուստի և այդ հարցը քննադատական չենք
 արեւում:

մանները անցկացնելիս ցույց տվեցինք ամփոփ տարածք, սակայն չի բացառվում, որ կայսրությունը, գործելով ավելի խորամանկ, փորձել էր կալվածքները շնորհել անկլավների ձևով: Այսուհանգերձ չի բացառվում, որ ավյալ դեպքում, այնուամենայնիվ, կալվածքները զբաղեցնում էին ամփոփ և միասնական տարածք: Կայսրության սահմաններում գտնվող կալվածքները անհամեմատ մեծ տարածք էին զբաղեցնում, քան Արարատականի ձևական իշխանության երկիրը, սակայն գտնվելով Մեծ Հայքի սահմանները շատ հեռու, հայոց թագավորներին հնարավորություն չտվեցին իրենց վրա տարածելու Հայոց թագավորության քաղաքական իշխանությունը:

К ВОПРОСУ О СОБСТВЕННЫХ ВЛАДЕНИЯХ АРМЯНСКИХ АРШАКИДОВ

Б. А. АРУТЮНЯН

Резюме

В I в. младшая ветвь парфянских Аршакидов утвердилась в Царстве Великой Армении, а в конце II в. превратилась в наследственную династию армянских Аршакидов, которые считались «горцакалами» (служителями) парфянского двора. За несение службы они получили владения в Атрпатакане, ставшие их личной собственностью. Со временем армянские Аршакиды получили подобные владения также от римских императоров. В статье рассматриваются вопросы возникновения, статуса, локализации этих владений, уточняются их границы. На основе первоисточников показывается, что юго-восточные границы собственных владений армянских Аршакидов в Атрпатакане проходили по реке Гандзак, по обоим берегам которой находился город Гандзак (вблизи современного села Лайлан). Правобережная небольшая часть города принадлежала Царству Великой Армении, что достоверно отражено в труде Фавстоса Бузанда. Владения армянских Аршакидов на территории Римской империи находились не в Малой Армении или Гиматене, как предполагают некоторые историки, а в Диоспонте. Территория четырех из семи ее епархий принадлежала армянским Аршакидам, а их епископы подписали от имени церкви Великой Армении постановления Никейского собора (325 г.). По нашему мнению, именно благодаря этому обстоятельству, данный регион позднее получил название Армениакон и был превращен в фему. В статье рассматривается также ряд вопросов исторической географии Армении.